# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 100

### «ՆԱԽՇՈՒՆ ՌԱՄԱԶՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2022թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 86-Ն որոշումը և Նախշուն Ռամազյանի հայտը՝ որոշում եմ.

1.«Նախշուն  Ռամազյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 67058379) տալ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2022 թվականի հունվարի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ի համար (կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0.3 գործակիցը):
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ______________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 101

«ԱՍՏՂԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2022թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 86-Ն որոշումը և Աստղիկ Հովսեփյանի հայտը՝ որոշում եմ.

1.«Աստղիկ Հովսեփյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 66986674) տալ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2022 թվականի հունվարի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ի համար (կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0.3 գործակիցը):
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 102-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0001-0028 ծածկագրի 0,095 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 12, փակուղի 3, հողամաս 10 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 103--Ա

## ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Շնող համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի N 32-Ա որոշումը, Լոռու մարզպետի 2022 թվականի մայիսի 05-ի N 01 /106,3,1/04060-2022 և «Շնողի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
2022 թվականի մայիսի 03-ի N 07/22 գրությունները՝ *որոշում եմ.*

1 «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի մայիսի 12-ին կայանալիք մրցույթն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝
**Արմինե Խառատյան** - «Շնողի մանկական արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
հանձնաժողովի քարտուղար՝
*Լիլիթ Ներկարարյան* - Շնողի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ- հաշվապահ
հանձնաժողովի անդամներ՝
*Արփակ Բայրամյան* - համայնքի ավագանու անդամ
Անահիտ Բարոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության ,մշակույթի և սպորտի վարչության մասնագետ
Լիանա Բաբայան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության ,մշակույթի և սպորտի վարչության մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 104-Ա

### «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի, «Աշխատանքային օրենսգրքի» 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի  ու հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 12-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 04 որոշումն ու Ասպրամ Ամիրջանյանի`   դիմումը ` **որոշում եմ.**

1.Ասպրամ Արևշատի Ամիրջանյանին 2022 թվականի մայիսի  13-ից նշանակել Շնողի համայնքային «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում` նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր` հինգ տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 105-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԹԵՂՈՒՏ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-037-0002-0019 ԾԱԾԿԱԳՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 4-րդ մասի, 43-րդ հոդվածի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «ՀԱՍՏԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ) ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30 - Ի N 479 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 828-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Լոռու մարզպետի 22-04-2022 թվականի թիվ 01/111.6/03551-2022 գրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից տրված 12092018-06-0005 վկայականը, Է. Չիլինգարյանի կողմից 11-04-2022 թվականին տրված հայտը՝ **որոշում եմ.**

1. Էդգար Սամվելի Չիլինգարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի գյուղ Թեղուտ, 1-ին փողոց , 4-րդ փակուղի, թիվ 2/1 հասցեի (կադաստրային ծածկագիր 06-037-0002-0019) 0,02464 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը և փոփոխված գործառնական նշանակության համապատասխան օգտագործումը չի

խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20__ թ. ____________________
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 106-Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Վարդան Վարդանյանի հայտը ` **որոշում եմ**.

1. Քաղաքացի Վարդան Վարդանյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայր Շնող, փողոց 1, թիվ 134 (ծածկագիր՝ 06-088-0267-0022, վկայական թիվ 05052022-06-0023) հասցեի հողամասում թռչնաբուծական տնտեսության կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2.Վարդան Վարդանյանին՝ `
1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,
2) կառուցապատման (վերականգնման և ուժեղացման) աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 8 13 մայիսի 2022 թ.

Օբյեկտ՝ Թռչնաբուծական տնտեսության կառուցում՝ փոփոխելով հողամասի նշանակությունը որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների գյուղատնտեսական օբյեկտների հողամասի
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն) (հակիրճ բնորոշումը, հզորությունը
նախագծային փաստաթղթերի մշակման համար:
1-ին ռիսկայնության աստիճան, 1 նախագծային փուլով
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)
Գտնվելու վայրը Լոռու մարզ Շնող համայնք, գյուղ Շնող, փողոց 1, հողամաս134 , 06-088-0267-0022
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող Վարդան Վոլոդյայի Վարդանյան (ՀՀ Լոռու մարզ,համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 8, փակուղի 1,թիվ 9, հեռ 055 66 26 90)
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ կառուցապատողի հայտ, սեփ. վկայական 05052022-06-0023
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)
Առաջադրանքի գործողության ժամկետը
6/վեց/ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

### ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)
3. Հողամասի առկա վիճակը
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) _______________

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ _______________

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ առանձնացնել շին հրապարակը_______________

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) _______________

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) _______________

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 ,Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմերէ շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) _______________

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) _______________

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) _______________

9.7. այլ պահանջներ _______________

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը _______________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները _______________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում Կցվում է. _______________

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է. _______________

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է ______________________________

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է ______________________________

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ______________________________

12.6. աղբահանություն ______________________________

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում ______________________________

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում ______________________________

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — _տեղական շին նյութեր__ ______________________________

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ — ___ըստ նորմատիվ ակտերի ______________________________

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — _ ըստ նորմատիվ ակտերի ______________________________

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — _ ըստ նորմատիվ ակտերի ______________________________

19. Շրջակա միջավայրի պահպանում — ___ ըստ նորմատիվ ակտերի ______________________________

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — _____ ըստ նորմատիվ ակտերի ______________________________

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — _6/վեց/ ամիս 1 փուլով______________________________

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — ________չի պահանջվում ______________________________

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — չի պահանջվում ______________________________

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ — ____չի պահանջվում ______________________________

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում — ____առկա է ՔԾՓԿ ԲԲԸ 26-04-2022 թվականի եզրակացություն__________

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — ________չի պահանջվում ______________________________

27. Այլ պայմաններ — Նշված հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվել է Շնող համայնքի ավագանու թիվ 34-Ա որոշման հիման վրա ______________________________

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________________________ Դ.ՂՈՒՄԱՇՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 107-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 15 ապրիլի 2022 թվականի թիվ 34-Ա և ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 13 մայիսի 2022 թվականի՝ «Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին)» թիվ 106-Ա որոշումը՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0267-0022 ծածկագրի 0,01315 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 1, հողամաս 134 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 108-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ՝ 06-037-0303-0021 ԾԱԾԿԱԳՐԻ 0,77496 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ /ԽՈՏՀԱՐՔ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԱՈՒՐԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ , ՄՀԵՐ ԺՈՐԺԻԿԻ, ԱԻԴԱ ԺՈՐԺԻԿԻ ԱԼԻԽԱՆՅԱՆՆԵՐԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Նօրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, և հիմք ընդունելով քաղաքացի Լ. Ալիխանյանի դիմումը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ .**

1. Վերականգնել քաղաքացիներ Լաուրա Վաղարշակի Ալիխանյանի /ծնված՝ 07/01/1945թ./, Մհեր Ժորժիկի Ալիխանյանի (ծնված՝ 30.01.1972թ.), Աիդա Ժորժիկի Ալիխանյանի (ծնված՝ 15. 07. 1968թ.) հողահատկացման հիմքերը և սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի 06-037-0303- 0021 ծածկագրի 0.77496 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի /խոտհարք/ նկատմամբ:
2. Զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60– րդ հոդվածով սահմանված հողամասերում այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով
4. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ Լ. Ալիխանյանի դիմումը, անձնագրի պատճենը, հողամասի՝ «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող